

Կ-853-02.02.2021-ՏՀ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 34-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 12-րդ կետով՝

«12) Օրենսգրքով սահմանված դեպքերում դիմել օրինապահ հարկ վճարողի հավաստագիր ստանալու համար»:

**Հոդված 2.** Օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 13-րդ կետով՝

«13) հարկ վճարողի դիմումի հիման վրա՝ Կառավարության կողմից հաստատված կարգով սահմանված չափանիշներին բավարարելու դեպքում տրամադրել օրինապահ հարկ վճարողի հավաստագիր կամ մերժել օրինապահ հարկ վճարող համարվելու հավաստագրի տրամադրումը»:

**Հոդված 3.** Օրենսգրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 293. 1-ին հոդվածով՝

**«Հոդված 293. 1. Ավելացված արժեքի հարկ վճարողների հարկային կարգապահության  
հավաստումը և դրա առանձնահատկությունները**

1. Ավելացված արժեքի հարկ վճարողների դիմումի հիման վրա և ՀՀ կառավարության կողմից սահմանված չափանիշներին բավարարելու դեպքում համապատասխան հավաստագրի տրամադրման միջոցով հավաստվում է հարկ վճարողի օրինապահությունը:

2. Ավելացված արժեքի հարկ վճարողների օրինապահությունը հավաստվում է հարկային մարմնի կողմից օրինապահ հարկ վճարողի հավաստագրի տրամադրման միջոցով՝ սույն հոդվածում սահմանված ժամանակահատվածի ընթացքում իրականացրած գործունեության համար:

1) Օրինապահ հարկ վճարողի հավաստագիրը տրամադրվում է ավելացված արժեքի հարկ վճարող կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից դիմումը ներկայացնելու օրն ընդգրկող հաշվետու տարվան նախորդող տարվա հունվարի 1-ից, մինչև դիմումը ներկայացնելու օրվան նախորդող ամսվա վերջին օրացուցային օրը ներառող ժամանակահատվածում իրականացված գործունեության հիման վրա:

3. Օրինապահ հարկ վճարողի հավաստագիրը գործում է տրման օրվանից մինչև հավաստագրի տրման ամսվանը հաջորդող 12-րդ ամսվա վերջին օրացուցային օրվա ավարտը:

4. Օրինապահ հարկ վճարողի հավաստագիր ունեցող հարկ վճարողների համար Օրենսգրքով և այլ իրավական ակտերով կարող են սահմանվել վարչարարության իրականացման բարենպաստ պայմաններ:

1) Օրինապահ հարկ վճարողի հավաստագրեր ստացած հարկ վճարողների ցանկը հրապարակվում է հարկային մարմնի պաշտոնական կայքում:

5. Օրինապահ հարկ վճարող համարելու չափանիշները, ինչպես նաև օրինապահ հարկ վճարողի հավաստագրի տրամադրման կարգը սահմանում է Կառավարությունը:»:

**Հոդված 4.** Օրենսգրքի 305-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով`

«4. Հարկային մարմինը օրինապահ հարկ վճարողի հավաստագիր ունեցող հարկ վճարողներին` հավաստագրի գործողության ժամկետի ընթացքում, սույն հոդվածով նախատեսված իրազեկումն իրականացնում է նաև համապատասխան իրավական ակտերի պաշտոնական հրապարակման օրվանից հետո 10 օրվա ընթացքում` հարկ վճարողի էլեկտրոնային փոստին ծանուցում ուղարկելու միջոցով:»:

**Հոդված 5.** Օրենսգրքի 327-րդ հոդվածի 2-րդ մասում «այն ստանալուց հետո` 20 օրվա ընթացքում» բառերից հետո լրացնել` «,իսկ գործող օրինապահ հարկ վճարողի հավաստագիր ունեցող հարկ վճարողների դեպքում` դիմումը ստանալուց հետո` 10 օրվա ընթացքում» բառերով:

**Հոդված 6.** Օրենսգրքի 348-րդ հոդվածի 10-րդ մասի «ԱԱՀ գումարի մինչև 40 միլիոն» բառերից հետո լրացնել «, գործող օրինապահ հարկ վճարողի հավաստագիր ունեցող հարկ վճարողների դեպքում մինչև 60 միլիոն» բառերով:

**Հոդված 7.** Օրենսգրքի 442-րդ հոդվածի 1-ին մասում «30 օրվա ընթացքում» բառերից հետո լրացնել «, իսկ գործող օրինապահ հարկ վճարողի հավաստագիր ունեցող հարկ վճարողների դիմում-բողոքները` 15 օրվա ընթացքում» բառերով:

**Հոդված 8.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը, բացառությամբ սույն օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված դրույթի, որն ուժի մեջ է մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող 7-րդ ամսվա մեկից:

**Հոդված 9.** Սույն օրենքի դրույթները տարածվում են Կառավարության կողմից օրինապահ հարկ վճարող համարելու չափանիշները, ինչպես նաև օրինապահ հարկ վճարողի հավաստագրի տրամադրման կարգն ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա:

**Հոդված 10.** Կառավարությունը օրինապահ հարկ վճարող համարելու չափանիշները, ինչպես նաև օրինապահ հարկ վճարողի հավաստագրի տրամադրման կարգը սահմանում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

## ՏԵՂԵԿԱՆՔ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 34-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 12-րդ կետով՝

«12) Օրենսգրքով սահմանված դեպքերում դիմել օրինապահ հարկ վճարողի հավաստագիր ստանալու համար»:

**Հոդված 2.** Օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 13-րդ կետով՝

«13) ~~հարկ վճարողի դիմումի հիման վրա Կառավարության կողմից սահմանված կարգով ուսումնասիրել և տրամադրել օրինապահ հարկ վճարողի հավաստագիր կամ մերժել օրինապահ հարկ վճարող համարվելու հավաստագրի տրամադրումը~~ հարկ վճարողի դիմումի հիման վրա՝ Կառավարության կողմից հաստատված կարգով սահմանված չափանիշներին բավարարելու դեպքում տրամադրել օրինապահ հարկ վճարողի հավաստագիր կամ մերժել օրինապահ հարկ վճարող համարվելու հավաստագրի տրամադրումը»:

**Հոդված 3.** Օրենսգրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 293. 1-~~ին~~ հոդվածով՝

«**Հոդված 293. 1. Ավելացված արժեքի հարկ վճարողների հարկային կարգապահության հավաստումը և դրա առանձնահատկությունները**

1. ~~Ավելացված արժեքի հարկ վճարողների գործունեության արդյունքներով Օրենսգրքով սահմանված կարգով կարող է հավաստվել հարկ վճարողի օրինապահությունը:~~ Ավելացված արժեքի հարկ վճարողների դիմումի հիման վրա և ՀՀ կառավարության կողմից սահմանված չափանիշներին բավարարելու դեպքում համապատասխան հավաստագրի տրամադրման միջոցով հավաստվում է հարկ վճարողի օրինապահությունը:

2. Ավելացված արժեքի հարկ վճարողների օրինապահությունը հավաստվում է հարկային մարմնի կողմից օրինապահ հարկ վճարողի հավաստագրի տրամադրման միջոցով՝ սույն հոդվածում սահմանված ժամանակահատվածի ընթացքում իրականացրած գործունեության համար:

1) Օրինապահ հարկ վճարողի հավաստագիրը տրամադրվում է ավելացված արժեքի հարկ վճարող կազմակերպության ~~և~~ (կամ) անհատ ձեռնարկատիրոջ կողմից դիմումը

ներկայացնելու օրն ընդգրկող հաշվետու տարվան նախորդող տարվա հունվարի 1-ից, մինչև դիմումը ներկայացնելու օրվան նախորդող ամսվա վերջին օրացուցային օրը ներառող ժամանակահատվածում իրականացված գործունեության հիման վրա:

3. Օրինապահ հարկ վճարողի հավաստագիրը գործում է տրման օրվանից մինչև հավաստագրի տրման ամսվանը հաջորդող 12-րդ ամսվա վերջին օրացուցային օրվա ավարտը:

4. Օրինապահ հարկ վճարողի հավաստագիր ունեցող հարկ վճարողների համար Օրենսգրքով և այլ իրավական ակտերով կարող են սահմանվել վարչարարության իրականացման բարենպաստ պայմաններ:

1) Օրինապահ հարկ վճարողի հավաստագրեր ստացած հարկ վճարողների ցանկը հրապարակվում է հարկային մարմնի պաշտոնական կայքում:

5. Օրինապահ հարկ վճարող համարելու չափանիշները, ինչպես նաև օրինապահ հարկ վճարողի հավաստագրի տրամադրման կարգը սահմանում է Կառավարությունը:»:

**Հոդված 4.** Օրենսգրքի 305-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով`

«4. Հարկային մարմինը օրինապահ հարկ վճարողի հավաստագիր ունեցող հարկ վճարողներին` հավաստագրի գործողության ժամկետի ընթացքում, սույն հոդվածով նախատեսված իրազեկումն իրականացնում է նաև համապատասխան իրավական ակտերի պաշտոնական հրապարակման օրվանից հետո 10 օրվա ընթացքում` հարկ վճարողի էլեկտրոնային փոստին ծանուցում ուղարկելու միջոցով:»:

**Հոդված 5.** Օրենսգրքի 327-րդ հոդվածի 2-րդ մասում «այն ստանալուց հետո` 20 օրվա ընթացքում» բառերից հետո լրացնել` «,իսկ գործող օրինապահ հարկ վճարողի հավաստագիր ունեցող հարկ վճարողների դեպքում` դիմումը ստանալուց հետո` 10 օրվա ընթացքում» բառերով:

**Հոդված 6.** Օրենսգրքի 348-րդ հոդվածի 10-րդ մասի «ԱԱՀ գումարի մինչև 40 միլիոն» բառերից հետո լրացնել «, գործող օրինապահ հարկ վճարողի հավաստագիր ունեցող հարկ վճարողների դեպքում մինչև 60 միլիոն» բառերով:

**Հոդված 7.** Օրենսգրքի 442-րդ հոդվածի 1-ին մասում «30 օրվա ընթացքում» բառերից հետո լրացնել «, իսկ գործող օրինապահ հարկ վճարողի հավաստագիր ունեցող հարկ վճարողների դիմում-բողոքները` 15 օրվա ընթացքում» բառերով:

**Հոդված 8.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը, բացառությամբ սույն օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված դրույթի, որն ուժի մեջ է մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող 7-րդ ամսվա մեկից:

**Հոդված 9.** Սույն օրենքի դրույթները տարածվում են Կառավարության կողմից օրինապահ հարկ վճարող համարելու չափանիշները, ինչպես նաև օրինապահ հարկ վճարողի հավաստագրի տրամադրման կարգն ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա:

**Հոդված 10.** Կառավարությունը օրինապահ հարկ վճարող համարելու չափանիշները, ինչպես նաև օրինապահ հարկ վճարողի հավաստագրի տրամադրման կարգը սահմանում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱԶԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-853-02.02.2021-ՏՀ-011/1), «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-853<sup>1</sup>-02.02.2021-ՏՀ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱԶԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
<b>«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին»</b>					
1.	<b>ՀՀ կառավարություն</b>	<b>Նախագծի 2-րդ հոդված</b>	Նախագծի 2-րդ հոդվածում նախատեսված՝ Օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասը 13-րդ կետով լրացնելու վերաբերյալ հարկ ենք համարում արձանագրել, որ «Կառավարության կողմից սահմանված կարգով ուսումնասիրել» ձևակերպման պարագայում անորոշ է՝ ինչն է պարտավոր ուսումնասիրել հարկային մարմինը: Հետևաբար առաջարկում ենք քննարկվող հատվածը վերախմբագրել և շարադրել հետևյալ կերպ՝ «13) հարկ վճարողի դիմումի հիման վրա՝ Կառավարության կողմից հաստատված կարգով սահմանված չափանիշներին բավարարելու դեպքում տրամադրել	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			<p><i>օրինապահ հարկ վճարողի հավաստագիր կամ մերժել օրինապահ հարկ վճարող համարվելու հավաստագրի տրամադրումը»:</i></p>		
2.	«Կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	<p>Նախագծի 3-րդ հոդվածում «293.1-րդ» թիվն առաջարկում ենք փոխարինել «293.1-ին» թվով: Միաժամանակ առաջարկում ենք Օրենսգրքում նոր լրացվող 293.1-ին հոդվածը տեքստից անջատել միջակետով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասը:</p>	<p>Ընդունվել է: Նախագծում կատարվել համապատասխան փոփոխություն:</p>	<p>Ընդունվել է:</p>
3.	«Կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	<p>Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 293.1-ին հոդվածի 1-ին մասից հարց է ծագում, հարկ վճարողի օրինապահությունը հավաստվում է Օրենսգրքով, թե՞ Կառավարության սահմանած կարգով: Բացի այդ, կարծում ենք «կարող է հավաստվել» արտահայտությունը խիստ վիճահարույց է եւ սուբյեկտիվ դրսեւորումների տեղիք տվող, քանի որ նշանակում է, որ կարող է նաեւ չհավաստվել: Մինչդեռ, եթե հարկ վճարողը բավարարում է օրինապահ հարկ վճարող համարվելու համար Կառավարության կողմից սահմանված բոլոր չափանիշներին, ապա դրանից ենթադրվում է, որ միանշանակ հավաստագրվում է: Հետեւաբար, առաջարկում ենք «կարող է հավաստվել» արտահայտությունը փոխարինել «հավաստվում է» բառերով: Արդյունքում Նախագծի 3-րդ</p>	<p>Ընդունվել է: Նախագծում կատարվել համապատասխան փոփոխություն:</p>	<p>Ընդունվել է:</p>



			<p>հողվածով լրացվող 293.1-ին հողվածի 1-ին մասը առաջարկում ենք վերախմբագրել և շարադրել հետևյալ կերպ՝</p> <p><i>«1. Ավելացված արժեքի հարկ վճարողների դիմումի հիման վրա և ՀՀ կառավարության կողմից սահմանված չափանիշներին բավարարելու դեպքում համապատասխան հավաստագրի տրամադրման միջոցով հավաստվում է հարկ վճարողի օրինապահությունը:»</i></p>		
4.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հողված	<p>Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի» մասին օրենքի 16-րդ հողվածի՝ օրենսգրքում նոր լրացվող 293.1-ին հողվածի 2-րդ մասի 1-ին կետում առաջարկում ենք «և(կամ)» գրելաձևը փոխարինել «կամ»-ով:</p>	<p>Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>	<p>Ընդունվել է:</p>
<p><b>«Հայաստանի Հանրապետության տոների եվ հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին»</b></p>					
1.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության տոների եվ հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, վերնագիր, հողված 1	<p>Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հողվածի 3-րդ մասը, նախագծի վերնագրից և 1-ին հողվածից առաջարկում ենք հանել երկրորդ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը:</p>	<p>Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>	<p>Ընդունվել է:</p>

2.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության տոների եվ հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, վերնագիր, հոդված 1	Հինք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասը, նախագծի նոր լրացվող 4.3-րդ հոդվածը տեքստից առաջարկում ենք անջատել միջակետով, իսկ Նախագծի հոդված 1-ը ավարտել վերջակետով:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
----	-------------------	--	--	--	--------------